Հաշվետվություն

Հանրապետության Գործադիր Մարմինների և Տարածքային Կառավարման Մարմինների Ներկայացուցիչների Արտասահման Գործուղումների Արդյունքների Մասին

1. Հայրապետ Բաբայան

2. Արարատի մարզպետի տեղակալ

3. Ալբանիայի Հանրապետություն և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական

Հանրապետություն , հունիսի 5 -9 ը

4. ԵՄ - ի կողմից

5. Տարածքային զարգացման վերաբերյալ ճանաչողական այց

6/7. Հունիսի 5 ին Ալբանական Դուրրես քաղաքի կենտրոնում հանդիպում Տարածքային Զարգացման հիմնադրամի կողմից Դուրրեսի կենտրոնի վերանորոգման թեմայով, տարածքային կառավարման բարեփոխումներին վերաբերվող փորձ և մարտահրավերներ, ԵՄ զարգացման ծրագրերին դիմելու և դրանց իրականացման փորձ, 2015 թ ից քաղաքապետարանների խոշորացման փորձ , վերջում այցելություն Դյուրրեսի տեսարժան վայրեր: Ներկայացրել է քաղապետարանի ծրագրերի պատասխանատու Ինա Ժակոնին :

Հունիսի 6 ին հանդիպում Տիրանայի Տարածքային Զարգացման Գործակալությու - նում: Քննարկման թեմաներն էին . Տարածքային Զարգացումը Ալբանիայում - այս քաղաքականությանն ուղղված հետաքրքրության և ռեսուրսների աճի պատճառ - ները, Տարածքային Զարգացման իրավիճակը և բարեփոխումները այն իրակա - նացնող գործակալությունների տեսանկյունից, նոր ինստիտուցիոնալ կարգավո- րումների միջոցով առաջացած վաղ փորձառություններ , մարտահրավերներ :

Հանդիպում Վարչապետի գրասենյակում՝ Ռազմավարական պլանավորման և զարգացման ստորաբաժանման ղեկավար Օրիաննա Արապի հետ : Հանդիպման թեման էր ՏԶ պլանավորման և ֆինանսավորման համար կիրառվող մեխանիզմ - ներ , ռազմավարական ներդրումների և տարածքների զարգացման միջև փոխհարաբերություններ, կառավարման մակարդակներ - կառուցվածքներ սեկ - տորներում, համայնքների խոշորացումներ ՝ դրական տեղաշարժեր ու անցու - մային խնդիրներ : Հարց ու պատասխաններ , քննարկումներ :

Հանդիպում Պոլիս համալսարաններում ՝Կոպլան՝ ընկերության գլխավոր տնօրեն Դրիտան Շուստինայի հետ : Ներկայացվել է վաղ 2000 ականներից մինչ այսօր

Ալբանիայի Տարածքային զարգացման էվոլյուցիան, առաջխաղացում Շվեդական Զարգացման Համագործակցության կողմից հիմնադրված ՏԶ ծրագրերով :

Հունիսի 7 ին հանդիպում Ալբանական Ֆիերի քաղաքապետարանում : Քննարկման թեմաներն էին. ՏԶ քաղաքականություն, շահ և մարտահրավերներ՝ մունիցիպալ հեռանկարների տեսանկյունից, Տարածքային կառավարման բարեփոխումներին վերաբերող փորձ և մարտահրավերներ տարածքային խոշորացման- միավորման արդյունքում : Հանդիպել ենք քաղաքապետարանի ներկայացուցիչներ Ֆլորջան Մուչայի և Իրիս Քուկիի հետ : Այնուհետև այցելություններ տեսարժան վայրեր՝ Էլբասան քաղաքում և Ապոլլոնիա հնագիտական պարկ :

Հունիսի 8 ին հանդիպում Մակեդոնական Օհրիդ քաղաքում հարավ - արևմտյան ՏԶ պլանավորման կենտրոնում : Քննարկվել են ՏԶ-ի մեջ կենրտոնի դերը, ազգային կառույցների հետ տեղական ինքնակառավարման մարմինների համակարգումն ու համագործակցությունը , ԵՄ ծրագրերի իրականացման փորձը՝ ներառյալ միջսահմանային համագործակցությունը : Ներկայացրել է ՏԶ ոլորտի պատասխանատու Միրյանա Լոզանովսկան :

Հանդիպում Հարավ - արևմտյան տարածաշրջանի Տուրիստական Կլաստերում: Քննարկման թեմաներն էին ՏԶ ոլորտում ՓՄՁ - ների մասնակցությունը, ՏԻՄ - ի հետ համագործակցությունը, նմանատիպ նախագծերի իրականացման հնարավորություններ մեր տարածաշրջանում : Ներկայացրել է բիզնես ոլորտի պատասխանատու Ալեքսանդր Յանովսկին : Այնուհետև այցելություններ Օհրիդի տեսարժան վայրեր :

Հունիսի 9 ին հանդիպումներ Սկոպյեում Տարածքային Զարգացման նախարար Նուրխան Իզայիրի հետ :Այնուհետև քննարկումներ նախարարության աշխատակիցների հետ ՏԶ քաղաքականության սահմանում և փորձ, ՏԶ ինստիտուցիոնալ համակարգ թեմաներով :

Հանդիպում Փոխվարչապետի գրասենյակում : Քննարկման թեմաներն էին ՏԶ ընդարձակ ռազմավարական զարգացման քաղաքականություն, ԵՄ ինտեգրվելու գործընթացներ : Հանդիպումն անցկացրեց փոխվարչապետի օգնական Դանե Յասիֆովսկին :

Հանդիպում ՏԶ Բյուրոյում :Քննարկման թեմաներն են ՏԶ քաղաքականության իրականացման պրակտիկ տեսանկյունները :

Ինպես նաև այցելություններ Սկոպյեի տեսարժան վայրեր ու ծանոթություն մակեդոնական էթնիկ գյուղի հետ :

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ չեն եղել, փաստաթղթեր չեն ստորագրվել :

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ չեն եղել :

10. Արարատի մարզպետի տեղակալ Հայրապետ Բաբայան